ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

<< 26 >> սեպտեմբերի 2018թ. N 463-Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 7-րդ և 20-րդ ենթակետերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչության կանոնադրությունը համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Ա.ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի
<< 26 >> << սեպտեմբերի >> 2018թ.
N 463-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշման համաձայն:

2. Վարչությունն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, այլ իրավական ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը (այսուհետ՝ Նախարար) հաստատում է Վարչության կանոնադրությունը, այդ թվում՝ կառուցվածքը և կանոնադրության մեջ կատարում փոփոխություններ:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Վարչության հիմնական խնդիրներն են՝

ա) հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության մեթոդաբանության մշակումը, նշված ոլորտներում ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների մշակումը, բացահայտումը, վերլուծումը և գնահատումը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալուն ուղղված աշխատանքների կազմակերպումը.

բ) հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական մեթոդաբանության մշակումը, նշված ոլորտում ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների մշակումը, բացահայտումը, վերլուծումը և գնահատումը.

գ) առևտրային կազմակերպություններում պետական մասնակցության դիմաց շահութաբաժինների վերաբերյալ տարեկան հաշվետվությունների ստացումը, ուսումնասիրումը, վերլուծությունը, ամփոփումը, միջնաժամկետ հեռանկարում շահութաբաժինների գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մուտքերի ծրագրավորման գործընթացի համակարգումը, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման նկատմամբ հսկողությունը.

դ) պետական կառավարման լիազորված մարմինների համակարգերի պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ եռամսյակային (աճողական) և տարեկան հաշվետվությունների ստացումը, ուսումնասիրումը, ամփոփումը, վերլուծությունը, նշված կազմակերպությունների կառավարման մեթոդաբանության և հաշվետվողականության մեխանիզմների մշակումը, ինչպես նաև գործունեության կենտրոնացված մշտադիտարկման իրականացումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Վարչության գործառույթներն են՝

1) հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակումը և կատարելագործումը.

2) աուդիտորական գործունեությունը կարգավորող օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակումը և կատարելագործումը.

3) ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, փոքր և միջին կազմակերպությունների միջազգային ստանդարտների պաշտոնական թարգմանությունը, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց կիրառման և հրապարակման վերաբերյալ իրավական ակտերի նախագծերի մշակումը, դրանց կատարելագործումը, ինչպես նաև ստանդարտների կիրառմանն առնչվող պարզաբանումների տրամադրումը.

4) աուդիտի միջազգային ստանդարտների պաշտոնական թարգմանությունը, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց կիրառման և հրապարակման վերաբերյալ իրավական ակտերի նախագծերի մշակումը, դրանց կատարելագործումը, ինչպես նաև ստանդարտների կիրառմանն առնչվող պարզաբանումների տրամադրումը.

5) ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների և փոքր և միջին կազմակերպությունների միջազգային ստանդարտների հիման վրա ֆինանսական հաշվետվությունների ցուցադրական ձևերի մշակումը և դրանց կատարելագործումը.

6) ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների և փոքր և միջին կազմակերպությունների միջազգային ստանդարտների հիման վրա սկզբնական հաշվառման փաստաթղթերի, հաշվապահական հաշվառման գրանցամատյանների օրինակելի ձևերի նախագծերի մշակումը և դրանց հետագա կատարելագործումը.

7) ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների և փոքր և միջին կազմակերպությունների միջազգային ստանդարտների հիման վրա կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվային պլանի և կիրառման հրահանգի մշակումը և հետագա կատարելագործումը.

8) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համատեղ բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումը կարգավորող իրավական ակտերի նախագծերի մշակումը.

9) հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի նախագծերի մշակումը և դրանց հետագա կատարելագործումը.

10) հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների հիման վրա Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի մշակումը, կատարելագործումը, ինչպես նաև ստանդարտի կրառմանն առնչվող պարզաբանումների տրամադրումը.

11) հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի հիման վրա կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվային պլանի և կիրառման հրահանգի մշակումը և հետագա կատարելագործումը.

12) հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի հիման վրա կազմակերպությունների հաշվապահական հաշվառման քաղաքականության օրինակելի մոդելի մշակումը և հետագա կատարելագործումը.

13) հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի հիման վրա սկզբնական հաշվառման փաստաթղթերի, հաշվապահական հաշվառման գրանցամատյանների օրինակելի ձևերի նախագծերի մշակումը և դրանց հետագա կատարելագործումը.

14) հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի հիման վրա ֆինանսական հաշվետվությունների օրինակելի փաթեթի մշակումը և կատարելագործումը.

15) Հաշվապահների որակավորման մասով՝

ա. հաշվապահների, այդ թվում հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահների որակավորման քննությունների ծրագրի, հարցաշարի (թեսթերի և խնդիրների) և քննությունների անցկացման կարգի նախագծերի մշակումը և դրանց հետագա կատարելագործումը.

բ. հաշվապահների, այդ թվում հանրային հատվածի հաշվապահների որակավորման քննությունների կազմակերպումն ու անցկացումը և այդ նպատակով համապատասխան հանձնաժողովների հետ համագործակցումը.

գ. հաշվապահների, այդ թվում հանրային հատվածի հաշվապահների վկայականներ ստանալու համար ներկայացվող դիմումների, հաշվապահների և աուդիտորների որակավորման վկայականների գրանցամատյանների վարումը.

16) Աուդիտորների որակավորման մասով՝

ա. աուդիտորների որակավորման վկայական տրամադրելու համար հանձնաժողովի նիստերի նախապատրաստումը և այդ նպատակով համապատասխան հանձնաժողովների հետ համագործակցումը.

բ. աուդիտորների որակավորման պահանջները խախտելու դեպքում որակավորման վկայականի գործողությունը դադարելու վերաբերյալ հարցերի ուսումնասիրությունը և աուդիտորների որակավորման հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող նյութերի նախապատրաստումը.

17) հանրային հատվածի հաշվապահների ուսուցման և շարունակական մասնագիտական վերապատրաստման աշխատանքների կազմակերպումը.

18) միջազգային կազմակերպությունների և Եվրոպական Միության երկրների հետ համատեղ հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտներին վերաբերող պայմանագրերի, համաձայնագրերի և այլ փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքներին մասնակցությունը.

19) Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների համագործակցության շրջանակում հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտներին վերաբերող համաձայնագրերի և պայմանագրերի նախագծերի մշակման և կատարելագործմանն ուղղված աշխատանքներին մասնակցությունը.

20) Նախարարության հիմնական և մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև այլ նախարարությունների և գերատեսչությունների, պետական և ոչ պետական այլ մարմինների հետ համատեղ հաշվապահական հաշվառմանն ու աուդիտորական գործունեությանն առնչվող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակումը, գործադիր իշխանության հանրապետական մարմինների կողմից մշակված իրավական ակտերի ուսումնասիրությունը և մասնագիտական դիրքորոշման ներկայացումը.

21) քաղաքացիներից, կազմակերպություններից, նախարարություններից, պետական և ոչ պետական այլ մարմիններից ստացվող՝ հաշվապահական հաշվառմանը և աուդիտորական գործունեությանը վերաբերող հարցումների (նամակների) պատասխանների և պարզաբանումների նախապատրաստումը.

22) պետական մասնակցությամբ բոլոր առևտրային կազմակերպությունների շահութաբաժինների գծով յուրաքանչյուր տարվան հաջորդող երեք տարիների և առաջիկա բյուջետային տարվա կանխատեսումային ցուցանիշների մասով համապատասխան տեղեկատվության ստացումը, վերլուծությունը և գնահատումն՝ ըստ տարեկան շահութաբաժինների հաշվարկման բազայի և դրանց վրա ազդող հիմնական գործոնների.

23) լիազորված մարմինների կողմից իրենց համակարգերի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների շահութաբաժինների չափերի տարեկան և միջնաժամկետ կանխատեսումների վերանայման վերաբերյալ ներկայացված

առաջարկությունների քննարկումը և վերլուծությունը, ինչպես նաև նշված առաջարկությունների վերաբերյալ եզրակացությունների տրամադրումը.

24) Հայաստանի Հանրապետության բյուջետային օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ըստ տարիների՝ մեկ թվով) և դրա առաջին տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծերում ներառելու համար շահութաբաժինների գծով բյուջետային մուտքերի կանխատեսվող չափերի վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը.

25) շահութաբաժինների գծով բյուջետային մուտքերի եռամյակային համամասնությունների մշակման գործընթացի ապահովումը՝ գնահատելով համապատասխան գործոնների հնարավոր ազդեցությունն ըստ եռամյակների.

26) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների տարեկան շահութաբաժինների վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների, շահութաբաժինների վճարման չափերի հաստատման համար ընդհանուր ժողովների (խորհուրդների) որոշումների արձանագրություններից քաղվածքների ստացումը, ուսումնասիրումը, վերլուծությունը և ամփոփումը.

27) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ծախսերի առավելագույն թույլատրելի սահմանաչափերը խախտելու դեպքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների սահմանված չափերի ճշգրտմանը մասնակցությունը.

28) Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան հաշվարկված և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի գումարները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չվճարելու դեպքերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված դրույթների կիրառումը (օրական տոկոսների հաշվարկում).

29) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե շահութաբաժինների վճարման նկատմամբ հսկողության շրջանակներում այդ կազմակերպությունների՝

ա. լուծարման, մասնավորեցման (օտարման) և համանման պարագաներում շահութաբաժինների պարտավորությունների վերաբերյալ դիրքորոշման տրամադրումը.

բ. կանոնադրական կապիտալի փոփոխությունների վերաբերյալ դիրքորոշման տրամադրումը.

30) մինչև 50 տոկոս պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահաբաժինների չափի և վճարման ժամկետների վերաբերյալ համապատասխան տեղեկատվության ստացումը և ամփոփումը.

31) պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողության և հաշվետվական համակարգի մեթոդաբանության մշակման աշխատանքներին մասնակցությունը.

32) պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության մշտադիտարկման արդյունքում բացահայտված հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

33) լիազորված մարմինների կողմից ներկայացված պետական ոչ առևտրային կազմակերպությունների (բացառությամբ դպրոցների) ընթացիկ բյուջետային տարում կնքած բոլոր ֆինանսավորման պայմանագրերի, ինչպես նաև նախորդ բյուջետային տարում ստորագրված բոլոր ընդունման-հանձնման ակտերի պատկերամուտների հրապարակման ապահովում Հայաստանի Հանրապետության կառավարության www.e-gov.am կայքում.

34) լիազորված մարմինների կողմից ներկայացված պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության մասին եռամյակային (աճողական) և տարեկան կտրվածքով ծրագրային ցուցանիշների ստացումը, ամփոփումը, կազմակերպութան ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ տարեկան և (կամ) եռամյակային ծրագրային ցուցանիշներում սահմանված կարգով փոփոխությունների կատարման դեպքում՝ համապատասխան ճշգրտված ցուցանիշների ստացումը.

35) Պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ եռամյակային (աճողական) և տարեկան կտրվածքով ծրագրային և փաստացի ցուցանիշների շեղումների մասին հաշվետվությունների ստացումը, ամփոփումը, ինչպես նաև 10 տոկոս բացասական շեղումների (ռիսկի գոտի՝ եկամտային

հատվածում դրական, իսկ ծախսային հատվածում՝ դրական և բացասական շեղումները) վերաբերյալ համապատասխան պարզաբանումների ստացումը և վերլուծումը.

36) լիազորված մարմինների կողմից ներկայացված պետական ոչ առևտրային կազմակերպությունների դրամական միջոցների հոսքերի մասին եռամսյակային (աճողական) և տարեկան կտրվածքով հաշվետվությունների (ըստ բյուջետային գործառնական դասակարգման բաժինների և խմբերի) ստացումը, ամփոփումը և Նախարարության կենտրոնական գանձապետարան համապատասխան տեղեկատվության տրամադրումը.

37) պետական ոչ առևտրային կազմակերպությունների նպատակային և ձեռնարկատիրական գործունեության տարեկան ֆինանսատնտեսական արդյունքների մասին հաշվետվությունների ամփոփումը, միասնական տեղեկատվական ամփոփ բազայի կազմումը և Նախարարության կայքում հրապարակումը, կազմակերպությունների տարեկան գործունեության ֆինանսատնտեսական արդյունքների վերաբերյալ ամփոփ հաշվետվության կազմումը և Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացումը.

38) պետական ոչ առևտրային կազմակերպությունների հիմնադրման, վերակազմակերպման և լուծարման, գույքի օգտագործման (վարձակալության հանձնելու) և օտարման, ինչպես նաև դրանց լուծարումից հետո մնացած գույքի տնօրինման հարցերին առնչվող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերի վերաբերյալ եզրակացությունների ներկայացումը.

39) Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող անհրաժեշտ տեղեկատվության ազատության ապահովումը.

40) Նախարարության կանոնադրությամբ Վարչությանը վերապահված այլ գործառույթների իրականացումը.

41) Նախարարի և Նախարարության գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) այլ հանձնարարականների կատարումը:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6. Վարչությունը ղեկավարում է Վարչության պետը, նրա բացակայության դեպքում՝ բաժնի պետ-վարչության պետի տեղակալը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝բաժինների պետերից մեկը՝ Վարչության պետի հանձնարարությամբ:

7. Վարչության պետը անմիջական հաշվետու է Նախարարին:

8. Վարչության գործունեության համակարգումը Նախարարի հրամանով կարող է վերապահվել Նախարարի տեղակալներից մեկին:

9. Վարչության պետին հանձնարարականներ և ցուցումներ տալիս է Նախարարը: Նախարարի հանձնարարությամբ հանձնարարականները կարող են փոխանցել իրենց համակարգման լիազորությունների շրջանակներում Նախարարի տեղակալը, Գլխավոր քարտուղարը:

10. Վարչության գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերն ստորագրում է Վարչության պետը:

11. Վարչության բաժինների աշխատանքը ղեկավարում և կազմակերպում են բաժինների պետերը:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

12. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են հետևյալ բաժինները՝

1) Հաշվապահական հաշվառման մեթոդաբանության բաժին.

2) Ֆինանսական հաշվետվությունների մշտադիտարկման և աուդիտի կարգավորման բաժին.

3) Պետական մասնակցությամբ ընկերությունների շահութաբաժինների հսկողության բաժին.

4) Պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաշվետվությունների մշտադիտարկման բաժին:

13. Վարչության յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրվում և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքները ու կոմպետենցիաները և կառավարման համակարգում տեղակայվածությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով (աշխատատեղի նկարագրով):